ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ ՏԵՐ ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

«Բայց ոգիք արդարոց ի ձեռին Աստուծոյ
են, եւ ոչ մերձեսցի ի նոսա մահ»:
(Իմաստ Գ 1)

Եվս մի «ոգի արդար» հրաժեշտ տվեց, ևս մի երախտավոր հայր գնաց մարմնով փարվելու մորն ամենեցուն՝ բեղմնավոր հողին, հոգին հանձնելով Տիրոջը Երկնային:

Արդարությունն էր, ահա, շնչում երջանկահիշատակ հանգուցյալի՝ Հայց. Առաքելական Ս. Եկեղեցու չորս նվիրապետական Աթոռներից մեկի՝ Կ. Պոլսո Պատրիարքության արժանընտիր գահակալ Ն. Ա. Տ. Գարեգին Պատրիարք Գազանճյանի անձի մեջ, որի մահվան լուրը գուժեց Կ. Պոլսի Պատրիարքարանից ստացված ազդը.

«Հայրն մեր հոգեւոր և գլուխն Առաքելական Եկեղեցւոյ մերոյ, որ ի Թուրքիա՝ Ամենապատիւ Տէր Գարեգին Պատրիարք Գազանճեան աւանդեաց զհոգի իւր ի ձեռս Հօրն Երկնաւորի. ի 10 մարտի, յաւուր երկուշաբթի, ի Սուրբ Փրկիչ Ազգային հիւանդանոց, յութերորդ ամի հովուապետութեան իւրոյ, ի սուգ համակեալ զամենայն որդիս իւր հոգեւոր և զսիրելիս իւր»:

Եկեղեցու ժրաջան մշակին միայն ութ տարի տրվեց «հովուելու զհօտս իւր», քանզի անժամանակ ու անդարմանելի հիվանդությունը ջլատեց նրա ուժերը, և Նորին Ամենապատվությունը հանգչյավ ի Տեր:

Մարտի 10-ին Ազգային հիվանդանոցում Գեր. Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի նախագահությամբ Տան կարգի արարողություն կատարվեց, որից հետո հանգուցյալ Պատրիարք Հոր դին հոգևոր դասի և համայնքային ներկայացուցիչների ուղեկցությամբ տեղափոխվեց Գումգափու Թաղամասում գտնվող Մայր եկեղեցի: Միաժամանակ Կրոնական ժողովի և համայնքային մարմինների խորհրդակցությամբ որոշվեց լուսահոգի Պատրիարքի Վերջին օծման և Թաղման կարգերը կատարել մարտի 15-ին, կիրակի օրը: Այս ընթացքում Պոլսո Հայոց Պատրիարքարանին և Թուրքահայոց համայնքին ուղղված բազմաթիվ ցավակցական նամակներ ու հեռագրեր ստացվեցին, որոնցում պետական բարձր աստիճանավորներ ու բարձրաստիճան հոգևորականներ իրենց անկեղծ վշտակցությունն էին հայտնում Ամենապատիվ Պատրիարք Հոր վախճանման առթիվ: Ի թիվս բազմաթիվ ցավակցական նամակների, Թուրքահայությանը և Պոլսո Հայոց Պատրիարքարանին էին ուղղվել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Գեր. Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի, Հռոմի Հովհաննես-Պողոս Բ Պապի, Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի, վարչապետ Եսութ Յըլմազի, ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնի և այլոց վշտակցության գրերը:

Երջանկահիշատակ Գարեգին Պատրիարքի վերջին հրաժեշտի արարողությունները սկսվեցին շաբաթ օրը, մարտի 14-ի Կիրակամտի ժամերգությամբ:

Ծայրագույն Արևելքի Հայրապետական Պատվիրակ և Ավստրալիայի հայոց թեմի առաջնորդ Աղան արքեպս. Պալիոզյանի հանդիսապետությամբ՝ ժամերգությանը մասնակցում էին Պատրիարքական Ընդհանուր փոխանորդ

և Պատկառելի Կրոնական Ժողովի Ատենապետ Գեր. Տ. Մեսրոպ արքեպս. Մոլթաֆյանը, Տ. Շահան արքեպս. Սվաճյանը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի կողմից առաքված պատվիրակությունը՝ Ամենայն Հայոց Հայրապետի կողմից առաքված պատվիրակությունը՝ Եգիպտոսի Հայոց թեմի առաջնորդ Գեր. Տ. Զավեն արքեպս. Ջինչինյանի գլխավորությամբ և Մայր Աթոռի միաբաններ Հոգեշնորհ Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանի ու Տ. Արշակ աբեղա Խաչատրյանի մասնակցությամբ, Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի միաբան Գեր. Տ. Շահան եպս. Թոփալ-յանը, Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի Հայոց առաջնորդ Գեր. Տ. Գյուտ արքեպս. Նագաշյանը, Պատվիրակի փոխանորդ և Լիոնի Հայոց առաջնորդ Գեր. Տ. Նորվան եպս. Զաքարյանը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչ Գեր. Տ. Վարդան արքեպս. Դեմիրճյանը:

Մարտի 15-ին, կիրակի օրը, հընթացս Ս. Պատարագի, կատարվեց հանդուցյալ Գարեգին Բ Պատրիարքի Վերջին օծման արարողությունը: Արարողությանը ներկա էին մի շարք բարձրաստիճան հոգևոր և աշխարհիկ այրեր, որոնց թվում՝ Հունաց Տիեզերական Պատրիարք Ն. Ս. Տ. Տ. Բարդուղիմեոս Ա-ը, Հրեից Բաբունապետ Դավիդ Ասեոն և Կ. Պոլսո ազգային կրոնական փոքրամասնությանց այլ ներկայացուցիչներ, նաև Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի ներկայացուցիչը՝ Քեմալեդդին Ալիդաշողլին, պետական նախարար Զավիդ Գավաքը և այլոք:

Օրվա պատարագիչն էր Եգիպտոսի Հայոց թեմի առաջնորդ Գեր. Տ. Զավեն արքեպս. Ջինչինյանը: Հավարտ Վերջին օծման արարողության, պատարագիչ Սրբազանը հուզիչ դամբանական խոսեց, որում ընդգծեց երախտարժան Գարեգին Պատրիարքի հոգևոր, մարդկային բարեմասնու-թյունները՝ դրանք նկատելով իբրև նորոգ հանդուցյալ հոգևորականի նկարագրի անբաժանելի մասը:

Սրբազան Հոր խոսքից հետո Ս. Պատարագը շարունակվեց մինչև ավարտ, ապա Պատրիարք Հոր մարմինը գրվեց Պատրիարքարանում, որտեղից բազմաթիվ ինքնաշարժեր ընթացան դեպի Շիշլիի Հայոց գերեզմանատուն, ուր և պետք է ամփոփվեր հանգուցյալ Պատրիարքի դին:

Գերեզմանատանը, ի ներկայության թուրքահայ մեծաթիվ հավատացյալ-ների, կատարվեց Գերեզմանի կարգը՝ նախագահությամբ Գեր. Տ. Վարդան արքեպս. Դեմիրճյանի: Հավարտ արարողության, Սրբազան Հայրը մահախո-սական կարդաց, որում մասնավորաբար նշեց, թե հանգուցյալ Պատրիարք Հայրը հոգևոր շառավիղն ու ժառանգորդն էր իրավ հոգևորականների այն սերնդի, որի փայլուն ներկայացուցիչներն են Թորգոմ Պատրիարք Գուշակ-յանը, Եղիշե Պատրիարք Դուրյանը, Օրմանյան Սրբազանը և ուրիշներ:

Արարողության ավարտին հավատացյալները ծաղիկներ դրեցին Պատրիարք Հոր կիսով չափ լցված գերեզմանափոսի մեջ, որը պետք է ամբողջությամբ լցվեր յոթ օրերի ընթացքում:

Մեկնեց այս աշխարհից Պատրիարք Հայրը՝ բռնելով «ճանապարհ յամենայն երկրի, ուր գնալոց է ամենայն մարդ»՝ թողնելով բյուր հիշատակ ու օրհնություն:

Հիշատակն արդարույն օրհնությամբ եղիցի:

ԱՐՇԱԿ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ